

# Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

## ԱՐՁԱԳՈՆԳ ԵՒ ԲՈՊՈՅՔԻ ՂՈՒԾԱԻՈՐՈՒԹԵԱՆ.

Ա. 2001. քի. 2. — Հրատարակի ուսից Եկեղ. անգամ. սահմանը հասկ ճամբ է: Գործարար. — Ետեղ. Ազգայ. Բնօրինակի, 57, Կոնստանդուպոլ. 1859 թիվերիս 1. — Պոլս, Ազգայ. Մեղ. — Եղբայր, Ազգայ. Կրթութեան. — Եղբայր, Ազգայ. Տէր. Կատարեան Կրթութի:

### ԱՂԳԱՅԻՆ ՊԱՅՄՈՒԹԻՒՆ.

Նրամիս հոյ մը, որ ստորիներով բաշտներու ծառայեր է և որ սոյն առիթով քանի մը տասնի սուրբեր է իր թիւքը ընկերներէ, սովորածին օտնի համազգիններու հետ զանազան ժամանակ, յետագայ առակը պատմելու միշտ: « Կրտսերնի ծագաւոր մը կայ եղբր չղի-  
 « տեմ Ասիոյնի որ կոչմը. որ մը ոտնիկա կը փոխազի  
 « իր պատկերը քաշի նայ. առաջի փորովու պատկեր-  
 « համ մը կը կանչէ իր քով և կը հրամայէ որ իր փա-  
 « փուրը կտատարէ սննդաւոր: Առակերեանը ծագաւոր-  
 « ըին ինչ զից և անճամբորք բուրջի տէր ըլլալը զխա-  
 « նուով կը հասանի, կը խանարնի և զօրս կընէ  
 « արքունի սրանէն, բայց շուտ չեթմար ստատիկ շիտմ մը  
 « կը պաշարէ դիմքը և չղիտեր ինչ կըրպով փարտի  
 « այս ծանր որարտապի մէջ: Սնանուծիմը, համար-  
 « տմ է սննիկա, պատկերի մը առաջին ուրարտմիմն  
 « է, բայց եմ է աշխատի այս նմանումիմը որանէրս՝  
 « անաւարակոյս թագաւորին անճամանէլի պիտի ըլլայ,  
 « փամ դի հասարակ մարդն սննդամ ծնող թէ պատկաւոր  
 « տմ մը, զո՞ սիրտով չնշմարէր իր դէմքի պակաս-  
 « թիմը: Փամկրով կը բնտէ, կը տարակուսի, կը  
 « յուսահատի, սոյ և փերչէ հեռակեայ դիրքը կ'ըրեւո-  
 « կայ: Ստատարին սրտազի կերպարանը մը կու-  
 « տայ, հրացան մը կը դիէ ձեռքը և զէնքին կսծը կայր  
 « աչքին վրայ կը կրմնեցրի: Այս ձեռով կ'սիրի նկա-  
 « բէ և միակամի ժողաւորը կ'ըլլայ արի դինակիր մը  
 « Ասիկա իր սրտակերին կը համի, նմանուեան,  
 « ճանտանդ հնարքին վրայ կը զարմանայ և տու-  
 « տարէն կը փարձաւորէ արհեստարտին փարպետու-  
 « թիմը որ անտես ըրաւ նայոյին աչքին սցապիսի  
 « սրտկամին մը: Ամէն մարդ կը տեսնէ, կը խարտի  
 « և մէկուն միաքէն ճանցիթը սրբոյակուն կարտմի-  
 « նը: Մեր շրամիս հոյց այս պատմիկէ հտե կը հա-  
 « մարձակի անկէ այն հետեանքը բերի թէ՛ ամէն  
 « ազգոյն կը որարտարի պատկերեանին նմանի և իր  
 « ազգին սրտանմանները ծածկի օտարներու առջև:  
 « Բայց պակասման ըտելով ինչ կ'իմանայ այս Թիւրքա  
 « հայը և ինչոյնս ուրգեթ կրպիկ է զոյն ծածկել՝ եմէ  
 « քանի մը միլիոն ժողովուրդ անով կը փարակուի:  
 « Հարկ է որ միւս ուրգեթը բարբոթին կայր ըլլան և չաւա-

նէն, հետեայէս չհրատարակին այսպիսի նրկումին  
 մը, փամ դի կրպետանեանները բարբոթիմը կըր է ոտնի և  
 ի յոր աշխարհի կը յայտնէ: անխտիր՝ ինչ որ հշտար-  
 տանին կը սնայ: Առկէ գոտս բնտարուն կամ նիմական  
 պակասման մը ոչ իսխտարին է և ոչ տման. ընգնակա-  
 տանի քնարչ սիրտելու ուրգանտանքը կը շարմէ և  
 մարդատիրոմիմը կ'աշխատի գոյն բուժիլ և ոչ թէ  
 որոյնի վատարէն: Ո՞վ է այն մարդը որ Վայէ ըտտամ  
 չեանէն կանդնի և այն կուզի բնակիչներու վրայ զճու-  
 թիմ չգրար: Իսկ եմէ քանի մը մարդի միայն այս-  
 պիսի պակասման մ'տմին և ժողովուրդը ոտնիէ գերմ է,  
 յայտնի է որ մէկը չհամարձակիր մասնաւորը ընգնա-  
 նուր թնէ և թշտամանելու սկիսի: Անկրպայ՝ շրամիս հա-  
 յաղին բարոյական պակասման կ'ուզէ ըսել երբ  
 ամէն տեղ իմտատակորէն կը յիշէ իր առակը: Բայց  
 հոս ալ մասնաւորին վարքը, բարքը և ուրիշ ամանակի  
 թերտմիմները ընգնանուրին վրայ կ'ելու է ին բերի,  
 փամ դի մայր ինքնիշխան է. ուրտամին օտնի և  
 կրնոյ բարոյակուն օրէնքին հետեի կամ անկէ խտա-  
 բիլ, իր պատիւը որանէ կամ անյարգ թաւպիլ մարտու-  
 թիմներու մէջ: Ո՞վ ուրգեթը իրատունք ոտնի մարդերու  
 բարձման մը թշտամանէ այս առիթով. ճանտանդ  
 կըր այն բարձմանը զգուշանման թնէ և պակասմանը  
 զատարարտէ պակասարտին հետ: Մարդկային  
 օրէնքը և մարդա իրատունքը կ'միման այսպիսի անիմն  
 կարմիք մը որակնեռեւ աղաւտմանէն զուրս բարոյական  
 չկայ: Բայց եմ է բոյոր աղգ մը այս տեսակ թերտմիմ-  
 ներու ենթակայ է, միմն յող մը չենքճանչնար որ ծածկէ,  
 անտես ընէ զոտնը: Արգիմըք ամէն քան կրտան կը  
 համէ և եմէ համազգին յէ կամ ուրտանայ, ոտարաղ-  
 գին փաստ օտնի հաստատելու, բերան՝ իր օտնը և գրիչ  
 կրտատարակելու իր բաժը կամ անաւոր, ժողովուրդ  
 մը չիմար իրեն համար բարոյակուն մը հնարէ և ընդ  
 համար բարոյակունը սուրի տան տանու: Կեմէ յանգրի  
 այս թնէ՛ այ տակի կը իսխտարի նենդանիմը իր միւս  
 պակասմաններու վրայ աւելցնելով: Ընայնի է որ  
 աշխատի անտնջ ոտարք տանելու և օր մը անկէ փրկե-  
 լիս: Վերք մը՝ թէ բարոյակուն և թէ նիմակուն՝ պէտք  
 է որ յայտնուի որ բուժ գտնէ: Անդի համար աղգա-

սէր է այն մարդը որ պակասութիւն մը կը յայտնէ, կը նկարագրէ և դարձան կը բնտուէ, և չազգասէր այն՝ որ շանք կ'ընէ ամէն բան ծածկելու: Երբէք անիկա չկրնար պախարակուիլ երբ իր ազգայիններու միտքի խոտորումը և սիրտի կեղտը կը դատէ և բարոյական ասպակներով կը դատապարտէ ճշմարիտ քաղաքաւորութեան օրէնքներու համեմատ: Հայրենասիրութեան թիր ըմբռնումն է իր ազգը միշտ գովել, յամենայնի արդարացընել և հին նախապաշարումով օտարը ծնամի սեպել: Մեր օրերու հայրենական սուրբ տեսիլը անլի լայն է և աւելի անկասկածեամբ կը վարուի: Ազգը բոլոր մարդկութեան անհատ մը կը համարի և չուզէր երբէք Յոյներու կամ Հռոմայեցիներու ինքնամոլ սիրով փառաւորուիլ: Դիտէ որ կատարեալ ազգ չկայ և ամէն բազմութիւն պակասութիւններ ունի. զիտէ որ տասն երկու առաքելներու մէջ մէկ Յուդայ գանուեցաւ և միլիոնաւոր ամբոխ մը անսգրաւ չքարոզէր տղիտաբար:

Անհնարին է պատմական դէպքերու վրայ քիչ մը փրկիստփայտըն խորհիլ և չհամոզուիլ որ ամէն ազգային թերութիւն հիմնաւոր պատճառներ ունի: Զանոնք բնտուէրու, յայտնելու է խղճի որպէս զի օտար ազգերու դատումը մեղմի և ոչ թէ աշխատելու է տղայութեամբ քող հնարել, ծածկոյթ շինել և յայտնի դէպքերը նենգել: Օրինակի ազգաւ. անկարելի է որ Հայերու պէս ժողովուրդ մը, հինգ դարէ ի վեր երկիր երեսը սիրելէն և անլուր տառապանք կրելէն ետև, պակասութիւններ չ'ունենայ, վասն զի պարագաները հարկաւ կ'ազդեն սիրտերու և միտքերու վրայ: Մերունդ մը կ'ընդունի դանոնք բռնի և յաջորդ սերունդի մէջ կը շարունակուի անոնց ազդումը, մինչև որ նոր դէպքեր գան և իր ընկերական էութիւնը փոխեն: Հայ բազմութիւն մը Եան Աբբասի, Թամէրլանի ձեկնկիղ Խանի..... զաւաղանը զգալէն և բռնութեան հոտանքէ մինչև Պարսկաստան, Թիրքիա բռնուիլէն ետքը, կը հարկազրուի ուրիշ օրէնքով ապրիլ և հեռաբար փոխուիլ ու տեղական դրոշմը ընդունիլ պակասայ: Մեծ փառք կը համարուի իրեն եթէ բոլորովին չայլակերպիլը և ընտանի բարքը կամ առաքելութիւնները, եթէ ունի, կը պահէ ըստ մասին...: Հպատակ ազգ մը չկայ որ Հայերուն զխառնութիւնները չկրէ իր վրայ, վասն զի անոնք արդիւնք են պարագաներու և ոչ ընդաբոյս սովորութիւններ: Այն որ ուրեմն նախատինք չէ ուրիշներու ինչպէս Հայերուն ամօթ պիտի սեպուի...: Ի՞ զոր ուրեմն վերոյիշեալ հայը իր առակը մէջ կը բերէ անդու և մեղի դէմ տգէտ սամիլը կը գրգռէ քաւ և ետևերով: Իրեն պէս շլամիտ ըլլալու է մէկը որ զայն առնէ անցնիլ և ամէն պարագայի մէջ յիշէ. վասն զի եթէ Հայերը կը պարտաւորուին անոր համեմատ վարուիլ միւս ազգերը ինչպէս անկէ պիտի խոտորին: Եւ եթէ

ամէնքը միահամուռ աշխատին ծպտիլ և դիրար խաբել, ինչ կ'ըլլայ մարդկութիւնը, ուր կը մնայ պատմութիւնը, ինչ կ'անուանի ճշմարտութիւնը և ինչ դէպք կ'ունենայ բարոյականը...: Մի հարցներ. ազգերը տեսակ մը կապիկի հօտ կը շինեն...: Զարմանալին այն է որ այս այլանդակ հայը իր վրայ անգամ չկրնար գործադրել իր առակը, վասն զի իր միտքի շլտութիւնը աներև է նայողին: Թող նախ իր պակասութիւնը ծածկելու հնարք մը գտնէ և ետքը ելնէ ազգասիրութիւն քարոզէ մեղի: Ազգասիրութեան օրինակ կուտանք, չենք ընդունիր...: Իրրև մարդ իրաւունք ունինք մարդկային օրէնքը և իրաւունքը պաշտպանել մեր ոյժին չափ. իբրև հայ ոչ նուազ իրաւունք ունինք համազգայինրու առջև խառն յիշել այն որ յիրաւի պակասութիւն կը սեպուի ամէն ազգերու մէջ: Զենք կրնար գովել վատութիւն մը այն պատճառով որ հայերու արդիւնքն է, վասն զի ազգութիւնէն վեր արդարութիւն կայ: Զ'ենք ուզէր տոնմային պակասութիւնները սքօղել, վասն զի սուտ հայրենասիրութիւնը կ'ատենք: Հայ ենք և կ'աշխատինք այս անունը չ'արատել, բայց չենք կրնար ծիծաղելի ըլլար վասն զի հայ ենք... և այսպէս վարուելով Եւրոպայի քաղաքաւորութեան օրէնքին կը հնազանդինք: Զրպարտութիւնէն վախ չ'ունինք. վաստ կրնայ տալ մեզ՝ այլ ամօթ, երբէք: Ծակատնիս բայց է և մեր անցեալը կը վկայէ որ հայնեիքի և միտքի ազատութեան համար ամէն բան զոհեր և վտանգները ի մօտուտ տեսեր ենք...: Բաշայի խանիկ օձախիս մէջ մեծցողի մը լեզուն անլի կարճ պիտի ըլլար...:

Ս. Ո.

**ԹՈՅԼՏՈՒՌԻԹԻՒՆ**

(Շարունակութիւն և վերջ. Տես թիւ 2, էջ 9.)

ԵԿԵՂԵՑԻ կ'անուանի մարդերու ընկերութիւն մը որք մխասիրտ և մխակամ կը հաւքուին մէկ Աստուծոյ ծառայելու և այնպիսի պաշտօն մը տանելու համար որ հաճելի ըլլայ անոր և որ փրկութիւն տայու օգտէ: Այս ընկերութիւնը ազատ և կամաւոր է, վասն զի մարդ եկեղեցիէ դուրս կը ծնի և ետքը մխայն անգամ կ'ըլլայ անոր: Հաւատքը նիւթական ժառանգութեան մը ճամբանի որ հօրմէ կամ մօրմէ որդիներու անցնի և մնայ յաւիտեան: Մէկը չկապուիլը այս կամ այն ինչ ազանդի այլ կամաւ կը յարի այն բազմութեան սրու կրօնքը աստուածահանոյ կը թուի իր միտքին: Եւ որովհետև փրկութեան յոյսը միմակ պատճառ է այս կրօնքին յարելու, նոյն պատճառովն է որ հոն կը մնայ: Եթէ ժամանակէ ետքը սխալներ տեսնէ դաւանանքին մէջ կամ պաշտօններու կողմէն անկարգութիւններ երևին իրեն,

ինչն ազատութիւն չպիտի ունենայ անկէ երևելու ինչպէս որ ինքնակամ մտեր էր հոն : Կամաւ յարումէ զուրս եկեղեցի չկրնար հաստատուիլ ուրեմն, և բուռնեւ ճիմն իվեր կը տապալէ զայն : Այլ ընկերութիւն մը որքան ազատ ու կամաւոր ըստի, անկործան մնալու համար, հարկ է որ օրէնքներով կառավարուի և կարգեր ունենայ : Ասոնք բռնի չեն կրնար հաստատուիլ կամ տրուիլ. բազմութիւնը կամ իր երեսփոխանները միայն իրաւունք ունին այսպիսի օրէնքներ հաստատելու : Ոմանք կը պնդեն թէ՛ կրօնական բազմութիւն մը ճշմարիտ եկեղեցի ըլլալու համար առաքելական առոտ և գաւաղան մը ունենալու է Քրիստոսէն մինչև ճիմա անընդհատ ատանդութիւնով : Այս անհրաժեշտ հարկատրութիւն մը չթուրի և աւետարանը այնպիսի վճիռ մը չպարունակէր : Այլ կը հաւանիմ նաեւ ասանկ կարծիք մը ընդունիլ եթէ արուի մարդու ազատութիւն յարելու այն բազմութեան ուր իր հոգոյ փրկութեան ամէն հարկատր եղածը կը գտնէ :

Յկեղեցիի մը նպատակն է, ինչպէս և ըսինք, զԱստուած պաշտել և այս կերպով յախտնական կեանքին համար : Ուսկէ կը հետեւի որ ամէն օրէնսդրութիւն զէս ի այս նպատակը պիտի նայի և եկեղեցական կանոնները հոգեւոր սահմանէն զուրս չպիտի երևն քնաւ : Բայց ինչ զօրութիւն պիտի հսկէ այս կանոններու վրայ որ անձերի կատարուին. — խրատը միայն : Այլ եթէ խրատը չբաւեր և մոլորութիւնը չհամոզուիր : Այն առեւն բարոյական արքայ մը կը արուի և ամէն յարաբերութիւն կը դադրի Յկեղեցիին և մոլորեալին հետ :

Այսպէս մէկ կողմէ քաղաքական պետութեան և միւս կողմէ կրօնքի իրաւունքին սահմանը որոշակի հաստատակն էտեւ կը մնայ թոյլտուութեան պարտքերը քննել :

Յկեղեցիի մը օրէնքին զէմ դնել, զայն աւերելու աշխատիլ է, և ամէն անգամ որ խրատուելէ էտքը իր զիմադրութիւնը կը շարունակէ, իրաւունք կուտայ բազմութեան զինքը զուրս հանելու, վասն զի եկեղեցին այն օրէնքով միայն կը պահուի : Բայց այս զուրս հանելը ոչ բռնութիւն, ոչ թշնամանք և ոչ վնաս մը կ'ենթադրէ. ուստի զգուշանալու է որ մոյի եւանդով և կատաղօրէն չըլլայ անդամի մը մարմինէն բաժանումը : Կամաւոր մարդ մը իրաւունք չունի ուրիշին ինչքը կապուել կողոպտել այն պատճառով որ իր կրօնքին չհետեւիր և իրենպէս չպաշտէր : Յկեղեցի մը մասնաւորէն աւելի իրաւունք չունի ուրիշ կերպով վարուիլ և մարդկային ու ընկերական օրէնքները մոռնալ : Այս օրէնքը անգլիկոս պահելու է ոչ միայն քրիստոնէսներու այլ և բոլոր օտար ազանդներու համար : Յկեղեցիները իրարու հետ այն թոյլտուութիւնով պէտք է վարուին ինչպէս եկեղեցի մը կը հարկադրի վարուիլ մասնաւորի մը հետ : Մե-

ջերնէն մէկը չկայ որ միւսին վրայ իրաւունք մը ունենայ նաեւ եթէ քաղաքական պետը իր կողմը հակի : Կամս զի ոչ տէրութիւնը եկեղեցիի մը և ոչ եկեղեցի մը տէրութեան կրնան այսպիսի արտօնութիւն մը տալ իրաւունք : Յկեղեցին է և կը մնայ ազատ և կամաւոր ընկերութիւն մը թէ՛ պետին յարելու ժամանակը և թէ՛ հրաժարելէ էտքը : Անհիմն է ըսել թէ ուղղափառութիւնը իրաւունք ունի հերեալիտութեան վրայ. վասն զի ամէն եկեղեցի զինք ուղղափառ կը գաւանի թէպէտ և միւսներէ հերեալիտս անուանի. իր հաւատքը ճշմարտութիւն կը սեպէ և ներհակ կարծիքը մոլորութիւն կը համարի : Կատաւոր մը չկայ երկրի վրայ որ երկու թշնամի եկեղեցիներու վէճը կտրէ և բան մը որոշէ : Աս դատը բոլոր մարդկութեան ամենակալ թագաւորին կը վերաբերի և անիկա միայն իրաւունք ունի հերէսիտութիւնը պատժելու : Բայց դէնք որ հնարին ըլլայ յայտնել թէ ո՞ր եկեղեցին ստուգու ուղղափառ է, այս իրեն իրաւունք չտար միւսը կործանելու, վասն զի կրօնքը մարմնաւոր իշխանութիւն չ'ունի և իշխան մը, ինչ կրօնքէ և ըլլայ, չկրնար իրեն շնորհել զայն : Եթէ շնորհէ մոլեգնաբար, արիւն և աւեր, պատերազմ և անհաշտելի ոխ բոլոր երկրին վրայ կը ծուալին. ոչ խաղաղութիւն կը մնայ և ոչ ապահովութիւն, և բարեկամութիւնը մարդերու մէջէն կը հեռանայ անգաւանալի կերպով : Կրօնական իշխանութիւնը, ուրկէ և գայ, չկրնար ուրեմն եկեղեցիին սահմանէն ելնել և քաղաքական իրերու խառնուիլ : Նմանապէս պետութիւնը, ինչպէս և հաստատուի, ազգային և ընկերական օրէնքէ կը հեռանայ, երբ կ'սկսի խիզճիքը վրդովել և կրօնք մը միւսներու զէմ պաշտպանել : Այլ է եկեղեցի և այլ է տէրութիւն : Երկուքին սկիզբը և նպատակը որոշ են. երկուքին մէջ անբառնալի և անըրզուելի պատուար մը կայ և զանոնք իրարու հետ խառնել, երկինքը երկրի հետ շփոթել է : Կրօնքի պետերը կը հարկադրին ոչ միայն թոյլտու ըլլալ այլ և աշխատիլ քրիստոնէութեան առաջին վարդապետներու նմանիլ, ժողովուրդը կրթել, ամէն մարդերու համար սէք քարոզել և մոյի եւանդը մարել ամէն սիրտերու մէջ : Մոլորութիւնը հերքելու է և ոչ մոլորեալներու զէմ զինուելու է գանոնք ջնջելու նպատակով : Յկեղեցի և եկեղեցականք որք բռնութեան վրայ կը յենուն, իրենք կը մոլորին այս և այն զիւր աշխարհի մէջ :

Նմանապէս քաղաքական օրէնքը հաստատուած է մարդու հարստութիւնը և կեանքը արտաքին հարուածներէ կամ թշնամութիւնէ գերծ պահելու համար : Անհնարին է որ օրէնքը պաշտպանէ մարդը իր անհոգութեան և զէջ վարքին զէմ եթէ այն ուրիշներու չպարի : Երկրաւոր պետ մը որ կը համարձակի անձնական շահերը կարգադրել անասելի պակասութեան մէջ կիցնայ և ժողովուրդը կը խուլէ : Մարդ թէ՛ ընկերութիւնէ զուրս և թէ՛ ընկերութեան մէջը իր անձին և հետեւաբար իր

հոգեւոր և մարմնաւոր գործերու տէր է, և որքան որ հասարակութեան մեայ չտար աղատ է ընել կամ չ'ընել իրեն հարկաւոր եղածը ի մարմնաւորին և ի հոգեւորին. ի բնէ արտօնութիւն ունի (և այս արտօնութիւնով միայն մարդը՝ մարդ է) բարին չարէն ընտրել. այս ընտրութիւնը ուրիշ մը չ'իրնար յաւիշտակել և անոր տեղ գործածել. Անհեթեթ բան է իշխանաւոր անձերու թողուլ այն իրերու խնամը որոս մարդ կը պարտաւորուի ինքնիրեն, ուշի ուշով քննել և բնտուել, և թէ ոմանք ծնունդով վեր են միւս մարդերէ, բնութիւնը ամենքը հասասար կը բռնէ և ժողովուրդը կառավարելու արհեստը ամենագէտ չ'է և չ'իրնար ըլլար. հեռեւապէս իրեն տուեալ չէ յայտնել թէ սրն է ճշմարիտ կրօնք և թէ ինչ է ճշմարտութիւն կրօնական խնդիրներու մէջ... : Ուղեւոր մը ինքնիշխան է իր ճամբայն ընտրել և այս կամ այն ինչ մարդերու ընկերութիւնը նախապատիւ սեպել իր նպատակին հասնելու համար : Մարդ մը իրատե՛ք չ'ունի բռնի ուղեցոյց ըլլալ այս երկրի վրայ..... :

Պէրանձէին համար զրուած մեր փոքր յօդուածը բանի մը արձագանգ գտեր է հայ սիրտերու մէջ որք կը գանգատին մեղմէ թէ ինչո՞ւ աւելի երկարօրէն չ'սօսեցանք այս անմահ բանահիւսին վրայօք : Լաւ գիտեն որ Հայերուն վիճակը չ'ներէր անկէ երկար զրել և մանր դատում ընել : Մեր նպատակն էր համառօտ տեղեկութիւն մը տալ և ոչ մի առմի իր երգերը քննել որք զրեթէ անձանօթ ևն Ասխայի կողմերը : Գանգատողներէն մէկը կ'ուղարկէ մեղ նմանութիւն մը Լե Բելիքաւն Բեյը ըստած երգին, և կը խնդրէ որ հրատարակենք դայն Սընեւաթի մէջ : Սիրով կ'ընդունինք այս խնդիրը և կը փոփոխենք որ մեր աղգայինները ոչ միայն երգեն դայն այլ և բանահիւսութեան այս մասը մշակեն : Ժէզուիթութիւնը հիմա սկսաւ հայ ժողովուրդին մէջն ալ արմատ ձգել և արդէն իր ժանտ ոտտերը կ'սպառնան պատանու-թիւնը ըմբռնել և հեղձել իր դժոխային ձայնը լսելի կ'ըլլայ մինչև մեր բոլորախըր. « Ամենքդ դողացէք, դձեղ արդ կ'օրհնենք » (1) : Այս պարագայի մէջ Պէրանձէին եղանակները քիչ մը հայ ահանջներու քով հնչուին նէ գէշ չ'ըլլար..... :

(1) Français, tremblez tous, nous vous bénissons!  
(Béranger.)

Գ Ա Բ Ի Կ

Մօրօք Գաբրիկ սնակէ գաս.  
— Արլը քէնի սենեակէ :  
Մէկ ժամ օրհնել և վահաս  
Կրել, բրտնիլ հերիք է :  
Արդ ժամ էնաս աշխարհակամ  
Փեղոյր և վարտիք հագնիլ է արժան.  
Յոյս բնաւ չ'իք ալ օրհնենքէ,  
Ոստելու հայիք, հոն է շահ հիմա :  
Գաբրիկ անա գայ  
Ահա կը դառնայ  
Եւ սր կողմ դառնայ նոր դէմք ցոյց կուտայ :

Կնտուկ Գաբրիկ ինչ է այդ .  
— Իմ հինօրեայ պարզ դիմակ :  
Նայէ իր գոյն ալ չէ յայտ,  
Տանիմ ներկել տամ հիմակ :  
Մինչև այսօր այն կը բաւեր  
Եւ անյայտ էին մեր ամէն դաւեր .  
Հարկ է փոխել և նոր տեսակ  
Գտնել ձե, շարք և դարդ բաղմերփնեայ :  
Գաբրիկ անա գայ  
Ահա կը դառնայ  
Եւ սր կողմ դառնայ նոր գոյն ցոյց կու տայ :

Գաբրիկ ըսէ իձեռին  
Ի՞նչ կը տանիս սրբօրէն .  
— Հնարքներու տուփ մ'անգին,  
Եւ Հայ ազգին համօրէն,  
Ճակատագիր տնդ ներփակի .  
Երկինքէ ինձ այն եկաւ ուղղակի .  
Եւ երբ ուղեմ այն փոքր տուփէն  
Բոլոր Հայերուն լոյս պիտի շողայ :  
Գաբրիկ անա գայ  
Ահա կը դառնայ  
Եւ սր կողմ դառնայ նոր լոյս կը ցոլայ :

Գաբրիկ ինչո՞ւ կ'ըստասես  
Հապա դայն տուփ բանալու :  
— Ես պատրաստ եմ անա տես,  
Այլ բանալին չէ հլու .  
Ոսկի բալլիք է հարկաւոր  
Որ զիւրաւ բացուի այն տուփ հրաշաւոր :  
Յառաջ մատիւր դաւակ Հայու  
Ոսկի տնւր մեղ շատ որ բեղ շատ լոյս գայ  
Գաբրիկ անա գայ  
Ահա կը դառնայ  
Եւ որ կողմ դառնայ ոսկի կը մուրայ.....

Քաբրիկ ոսկի ի Պօլիս  
 Դու կը գտնես շատ զիւրաւ .  
 — Երթամ ուրեմն և ազգիս  
 Նուիրեմ զիմ լոյս անբաւ .  
 Այս նոր տեսակ է առևտուր  
 Զոր էս հնարեմ աշխարհիս իրար :  
 Վայ ձեզ Հայեր որ չիյաէք բնաւ  
 Թէ աննկ առևտուր կայ երկրի վրայ :  
 Քաբրիկ անա գայ  
 Անա կը գառնայ  
 Եւ որ կողմ գառնայ բան կ'տունէ կուտայ :

Այսպէս կ'ըսէ Քաբրիկ այն  
 Եւ ժպտելով կը մեկնի :  
 Ո՞հ որչափ կոյր զկուրայն  
 Պիտի երթան ըզկընի,  
 Ապուշ Հայեր, որք տակաւին  
 Այսքան փորձէ ետք, հաստան Քաբրիկին .  
 Գնա Քաբրիկ մեծագընի  
 Գնա լոյս ծախէ հասկըցող չիկայ :  
 Քաբրիկ անա գայ  
 Անա կը գառնայ  
 Եւ որ կողմ գառնայ նոր սուտեր կ'ործայ :

ՀԱՅ ԴԻԻՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ

Ասիէ քանի մը տարի առաջ Գարաթոք անուն շոգե-  
 նաւը Մարսիլիայի նաւահանգիստէն կը հեռանար քաղ-  
 մաթիւ անցորդներով և կ'ուզուէր դէպ ի արեւելք :  
 Հոն կը գտնուէր հայ երիտասարդ մը որ բուժական  
 արհեստը սովորելէն ետև հայրենիք կը գառնար : Եւրո-  
 պայի մէջ երկարամեայ բնակութիւնը և պանդխտութիւնը  
 իր դէմքը քիչ մը խամրեր էին, բայց իր ծաղիկ հասակին  
 կայտառութիւնը գեռ կը փայլէր իր վրայ ու նայողին  
 ուշը կը զբաւէր : Այն վայրկեանի մէջ աննկարելի տրտ-  
 մութիւն մը կը պաշարէր զինքը և յարկին մէկ կողմը  
 քաշուած Մարսիլիային զիրքը կը նկատէր ու կարծես  
 թէ կ'ուզէր ըսել. « Այսպէս անա ուրեմն Ծօջան այն օր  
 թշուառ գիւղ մ'է և իր վտարանդի դաւակներէն հաստա-  
 տուած աւանը Գրանսայի ամենէն բարօրալի քաղաքն է  
 եղեր... : Ծառը չորնալու վրայ է և ճիւղերէն մէկը  
 հարուստ և հիւծալի կը դարգանայ բոլոր աշխարհի  
 հետ յարաբերութիւն ունենալով : Ափսոս . Ասիա այն  
 մայրերու կը նմանի որք ծնել կրնան բայց որք անկա-  
 բող են իրենց արգանդի պտուղը բարգաւաճել : Մարգ-  
 կային ամէն տեսիլները հոն կենանք առին այլ և ոչ  
 մէկը արմատ ձգելով մեծցաւ հոն : Եւրոպայ գայեակ

մ'է միայն, բայց գայեակ որ մայրէ աւելի սէր ունի և  
 անա անոր համար է որ յառաջադէմ եղէր ու կատարե-  
 լութիւններ առեր է : Ո՞վ Ասիա . ո՞վ խորթ մայր... : »  
 Հայրենիքին տխուր պատկերը իր առջև կուգար ակա-  
 մայ և զայն Եւրոպայի հետ բաղդատելով կը տեսնէր  
 որ տարբերութիւնը անհուն է ու իր միտքը կը զլորէր  
 անմեկնելի վիատութեան մը ներքև : Սակայն իր բոլոր  
 զգայութիւնները և սիրտը հայրենական սիրով կ'եռային  
 և գրեթէ կը բողբոջէին իր անյուտութեան դէմ : Ժամերով  
 հոն անշարժ մնալէ ետև կը գառնար դէպ ի բազմու-  
 թիւնը և կ'սկսէր միմակ երթնելի միտքի և սիրտի այս  
 գառն հակասութիւններու ենթակայ :

Ուղևորներու մէջ կը գտնուէին նաև մէկ հասակաւոր  
 անզգիացի մը սիրուն և խարտեաշ օրիորդի մը ընկերու-  
 թեամբ : Ասիկա շատ գեղանի չ'էր, բայց իր ոսկեթել ու  
 գանդրալի մազերը, իր սպիտակ մորթը, իր կապույտ  
 անուշ աչիւր սիրագրաւ պատկեր մը կ'ընծայէին : Ծոցե-  
 նաւ մտնելու առևն թեթև այլայլութիւն մը կ'արէր իր  
 դէմքը բայց գամ քան զգամ նշանաւոր դուարութիւն մը  
 կուգար կը նկարուէր հոն : Հազիւ թէ քսան տարեկան  
 կար և իր հօր աչքին լոյսն էր : Հայ երիտասարդը զանոնք  
 ճանչցեր էր շոգեկառքին մէջ և իր քաղաքաւար կերպե-  
 րով անզգիացիին համակրութիւնը զրուեր էր բոլորո-  
 վին : Լիօն հասնելէ ետև իրարմէ բաժնուէր էին և երկու  
 կողմէն ալ չ'էին յուսար սր կրկին պիտի տեսնուին ծովու  
 վրայ : Մեծ-Պրիզանիայի դաւակները տաքտրիւն չ'են  
 և շատ դժուար է անոնց հետ ընտանութիւն ընել . բայց  
 յիշեալ անձը բացառութիւն մ'էր և իր տոհմին հպար-  
 տութիւնը չ'ունէր : Անիկա հեռուէն նշմարելուն պէս  
 հալը մտերմաբար մօտեցաւ և ըսաւ բարև տալէ ետքը .  
 Յոյս չ'ունէի ձեր յարգութիւնը նորէն տեսնել վասն զի  
 հարկ եղաւ սր Լիօնի կողմերը մէկ քանի օր մնամ :  
 Արդարև գոհ եմ որ շոգեկառն մէջ ձեր ընկերութիւնը  
 պիտի վայելեմ : Ուղևորութեան բարեկամներէ միշտ  
 բարի յիշատակ պահէր. եմ և կարելի է չհատարեմ թէ  
 ըսեմ որ բարեկամութիւնը հոն միայն տեսայ :

— Կը հաւատամ, պատասխան տուաւ հայ երիտա-  
 սարդը աղու ժպիտով մը . ճամբորդութիւնը զրեթէ  
 անընդհատ վտանգ մ'է և ճշմարիտ բարեկամութիւնը  
 վտանգի մէջ յայտնի կ'ըլլայ ինչպէս ոսկին բովի մէջ :

— Իրաւունք ունիք, մանաւանդ ինծի նման ճամբորդի  
 մը համար որ աշխարհի երեք կողմը պտուեր է շատ  
 կերպ սոսկալի վտանգներէ պրծելով... : Մի՞թէ ներկի  
 է հարցընել թէ որ երթալու միտք ունիք :

— Թիւրքիա . և դ՞ուր :

— Իդալիա . տաս անգամ տեսեր եմ այս երկիցը և  
 հայրենիքի պէս կը ճանչնամ անոր ամէն զիրքերը և  
 քաղաքները : Սիրտս յագ է և չեմ զգար հեառաբերու-  
 թիւն մը կրկին տեսնելու զանոնք, բայց Եկոն նայլ որ  
 ասիկա (ցուցնելով իր դուստրը որ քիչ մը հեռու նստեր

կը կարգար) կը սիրէ զ՛կողմիս և չըյագիր անոր երկինքէն և յիշատակարաններէն :

— Չեմ համարձակիր մեղադրել զինքը, Եղայիան Եւրոպայի սիրուն պարտեղ մ'է ուր արձեստներու ողին և բռնահիւսուածեան աշխոյժը ամէն սիրտերու մէջ արձագանգ ունին :

— Եւ որու մէջ կը մտնաք յիշելու, ըսաւ անգղիացին խօսքը ընդմիջելով, կը տեսնուին կրօնամոլութեան անտասկը, բռնութեան գաւազանը...

— Ճշմարիտ է, կրկնեց հայը, և Պէրանժէ երգի մը մէջ կը գոչէ,

Il est bien doux le ciel de l'Italie  
Mais l'esclavage en obscurcit l'azur.

Եւ աղատութեան բարեկամները կը տրտմին որ այսպիսի պարտեղի մը մէկ գուռը մոլի եռանդին ձեռք ըլլայ, միւսը Նաբօլիայի և երրորդը Աւատրիայի :

Անգղիացին պատասխան չտուաւ այս վերջին խօսքերու, անտարակոյս գաղլացի կարծելով զհայը. բայց իր մտածութիւնը չյայտնելու համար վրայ բերաւ շուտով. այս առաջին անգամ է որ ճամբորդութիւն կ'ընէր :

— Ոչ. հայրենիքէս Յրանսա գալու ժամանակ Իտալիայէն և Ալբանիայէն անցայ և բաւական ատեն պտըտեցայ հոն :

— Զձեզ գաղլացի կը կարծէի :

— Կը սխալէիք, Պարոն, արևելցի եմ և ազգով հայ :

— Ըսել է որ դուք հայրենիք կը դառնաք կրկնեց յարգի օտարականը աչերը բանալով զարմանքէն : Ես մէկ տարիի չափ Հայաստանի կողմերը ճամբորդութիւն ըրեր եմ և ձեր հայրենակիցներու վրայ մեծ համարում ունիմ : Մի՞թէ երկար ժամանակ է որ Յրանսա կը գտնուիք :

— Շիտակ տաս տարի :

— Հայրենիք դառնալ, սն, ինչ երանութիւն զոր ճամբորդները միայն կրնան վայելիլ և սրու յոյզը մարդկային կիրքերու մէջ նման չ'ունի : Ես ալ զգացեր եմ դայն շատ անգամ :

— Ստաց է. բայց երբ ծնած հողին վրայ աւերակէ և թշուառութիւնէ ուրիշ բան չ'էն նշմարուիր, մի՞թէ հայրենասէր սիրտին բերկրութիւնը անխառն է և թե՛ն տրտմութիւն մը չ'վրդովէր դայն :

— Այո. Ասիայի այս կողմը ողորմելի տեսարան մը կ'ընծայէ : ամէն տեղ թշուառութիւն, փլատակ, սակրտի և փոշի կը պատեն իր երեսը. բայց հայ տոհմը զեռ կ'ապրի այսպիսի աւերայրեաց հողի վրայ :

— Կիտամեռ, այնպէս չէ :

— Ուր չիք մահ, յոյս կայ. երիտասարդ սիրտ մը պէտք չ'է որ վնասուի :

— Սակայն...

— Երկրի վրայ չգտնուիր այնպիսի կէտ մը ուր քաջութիւնը չկրնայ հասնիլ. բուռնան է որ ազգ մը կամք, անբայքոյելի կամք մը, ունենայ. օր մը աւերակ և տատասկ, թշուառութիւն և աղիտութիւն կը վերնան այն կողմերէ : Հայաստան կրնայ նորէն ծաղկիլ և հինգ դարեայ խաւարումէ ետև, լուսաւոր երևիլ և բազմիլ ազգերու մէջ...

Անգղիացին այսպէս շարունակելու ատեն զգալի կերպով կը յուզուէր և իր խօսքերը արտաքոյ կարգի տպաւորութիւն կ'ընէին հայուն վրայ որ, ինչպէս ըսինք, Եւրոպայի վիճակը քննելով և իր ազգայիններու անհե՞ծ շարժումները տեսնելով, յուսաբեկ էր բոլորովին : Բայց լու մը չէր կրնար ըմբռնել թէ սրկէ կուգայ այն սերտ համակրութիւնը օտարականի մը բով : Ետքը իմացաւ որ անիկա Հայաստան գտնուելու ժամանակ հիւանդ եղեր է Վանայ կողմերը, ուր մեծ հիւրասիրութիւն և խնամ գտեր է մանուսանդ տնանկ պառաւէ մը, որ մայրական կամոզին սիրով հսկեր է իրեն. բով գրեթէ մէկ ամիսի չափ :

Ժամը հինգին կը մօտենար և զեռ աղնիւ օտարականը կը շարունակէր իր ճամբորդութիւնը յիշել և Հայաստանի վրայ խօսիլ երբեմն քաղաքական, երբեմն կրօնական և երբեմն արևտրական ակնարկութիւններ ընելով : Թէպէտ և իր ըսածներու մէջ շատ թիւր կարծիքներ նշանակէր հայը՝ սակայն կը լսէր համբերելով, այնքան անուշ կուգար օտարին բերնէն հայրենիքին գովեստը և նկարագրութիւնը լսել... : Արդէն օրը կը տարածամէր և մութը փոքր առ փոքր կ'իջնէր նախն վրայ : Օրիորդը զերբը փակէր էր և իր նայուածքը կ'ուղղէր դէպ ի ծովը սիրուն մտմտութիւն մը : Մովը միշտ հանդարտ էր և նաւարկութիւնը շատ զիւրութեամբ կը կատարուէր ի բերկրութիւն ամէն ճամբորդներու : Ի վերջէ՛ ճաշի ժամանակ եկաւ և ամէնքը սեղան նստան խառն զուարճութեամբ մը : Նաւը տեսակ մը բանտ է և անոր ճամճրութեան տանելու համար շուտով ընտանութիւն կը հաստատուի անցւորներու մէջ : Առջի իրիկունը սեղանին բազմութիւնը կարծես թէ մէկ ընտանիքէ էր և նաւավարին խօսքերը ընդհանուր ուրախութիւն կուտային անոնց :

Հետեակ օրը նոյն երթևեկը և նոյն խօսակցութիւնը յարկին վրայ : Հայազգին ամօծով կը կարմրէր տեսնելով որ օտարականը իրմէ աւելի տեղեկութիւն ունէր Հայաստանի երկազրութեան վրայ և չ'էր զիտեր ինչպէս վարուիլ : Դժբաղդաբար ինք բայաստութիւն մը չ'է. հարբիւր հայէն իննսուած իր վիճակի մէջ կը գտնուի և հայրենիքը չհամբնար : Աններելի սխալութիւն մ'է այս որ Հայերուն վերի վերոյ կրթութեան ծիծաղելի կողմը և ժողովուրդին աւանդապահ չ'ըլլալը կը յայտնէ :

Այն խօսակցութեան ատեն երիտասարդ Հայը կ'աշխատէր Էրբեմն լուռեամբ անցնելով, Էրբեմն միաժամկ պատասխաններ տալով իր ազիտութիւնը ծածկել և իր ատենին պատիւը պահել: Վերջապէս Արարատին խօսքը եղաւ: Տաղանակիրն Արարատ կ'ըսէ Հայը ուսելով մը: Օտարականը Նրեան քաղաքը կը յիշէ, անոր վաղեմի փառքը և հարատւութիւնը կը պատմէ և շրջակայ տեղերը մանրամասնաբար կը նկարագրէ: Հայը իմաստակորէն անոր ստուգաբանութիւնը կը կրկնէ, առաջին քաղաք որ Երևան էլաւ ջրհեղեղէ հտն ըսելով...:

Նրկար ժամանակ այսպէս շարունակելէն Էտրը երկուքն ալ նշմարեցին որ օրիորդը իր առջի տեղը նստեր և ուշադիր կարդար: Փութացին Եկան անոր քով և բարե սուլով սկսան քիչ մընալ ուրիշ նիւթերու վրայ խօսիլ: Հայ երիտասարդը անզոյիական սէգ ոզին զրգոնել ուղեւ լով, զրագիտութեան վրայ խօսք բացաւ և սկսաւ ազնիւ օտարականին հայրենիքը գովել, ազատութիւնը երկինք հանել և հեղինակները միտաւ միյնել: Ասխական առաւելութիւնով մը իր կարծիքները կը յայտնէր և անոնց հետաքրքրութիւնը կը շարժէր քանի մը նոր տեսիլներ մեկնելով: Իրանց որ օրիորդին զիրքը Վարժէրքութի հատոր մ'էր և վարպետութեամբ խօսքը դարձուց վեպերու և վիպագիրներու վրայ: Վարժէրքած ըսաւ ի վերջէ օրիորդին երեսը նայելով նորք ժպիտով մը. սն, ինչ անմասն վիպագիր և ինչ անգիտ ծարգման մարդկային կիրքերու: Իրեն նմանը չկայ Ներոսայի ազգերու գրականութեան մէջ. իր գրութեանը հայելի մ'են ուր աւանդութիւնները սզի կ'առնուն, արդի դէպքերը մարդու առջև կուգան և յոյզերու փոփոխիկ մը կ'զգանք անհենդան տառերու մէջէ...:

— Յիրուսի, պատասխան տուաւ օրիորդը կարմրելով. իր սիրուն գրութիւնը վեր առաւ և մատին մէկ ծայրը գիրքին նշան դնելով աւելցուց, ես ալ անկէ վերագոյն հեղինակ մը չ'եմ ճանչնար և սրբան կարգամ չ'եմ յագիր:

— Իրագիտութեան մէջ սակաւածիւ ևն այն հեղինակները որք մոզի ազգում ունին մեր միտքի վրայ, կրկին ըսաւ հայը ալ աւելի ողորելով, և երբ կը մտածեմ որ ես անզոյիքէն չզրտնալով և միայն ծարգմանութիւն մը կարդալով այնքան դուարութիւն գտայ հոն, չեմ դարմանար Էթէ դուք սիրտով և միտքով կը յարեշատկուիք երբ անոր բնագիրը կը վայելէք: Դուք ալ կրնաք վիպել, օրիորդ, որ իմ վիճակի մէջ գտնուող թերի սուլաւորութիւն մը կ'ընդունի, վասն զի ծարգմանութիւնը կը նմանի այն քնքուշ ծաղիկի որ ձեռքէ ձեռք իյնալով իր փափկութիւնը կը կորուստնէ և շատ անգամ հոտ մը չպահէր: Ա՛հ արմատին վրայ տեսնել դան, անուշ հոտը զգալ ու վայելել ուրիշ բան է:

Գոնութեան հով մը ծառայեցաւ այն վայրկեանին մէջ օրիորդի երեսին վրայ և մեղմ շարժումով մը իր միտքը յայտնեց ու ըսաւ. Ստոյգ է, ձեր ըսածին փորձը իմ

վրայ տեսեր եմ: Օտարագիր շատ վիպագիրներու արդիւնքը ինծի ազել և զրեթէ անհամ կ'երևին թէպէտ և ներհակ համբաւ ունենան ուսումնական միտքերու քով:

— Վէպը կեղծիք մ'է, օրիորդ, շատ անգամ իրութիւն (réalité) չ'ունի. երբ գրական դարպը կը վերնայ անկէ, ինչ կը մնայ հոն:

— Աը ներէք. հիմա բոլորովին ձեր կարծիքէն չ'եմ. վէպ կոչ որ արդարև կեղծիք է բայց շատանգամ կեղծիքին ներքև էջմարտութիւն մը կը պահուի, և ասոր հրատոյրքը, կարծեմ, նուազ չ'է:

— Այնպէս կը կարծէք ուրեմն որ այն վերագոյն կատարելութիւնը, որով վիպեալը կը ներկայուին, կը տեսնուի մարդերու մէջ:

— Ինչո՞ւ չ'է, ըսաւ անզոյիացին իր կողմէն կարծես թէ երազէ մ'արթըննալով:

— Ինծի համար երկբայելի է այն, կրկնեց հայը սկեպտիկեաց դէմքով. մարդ մէկ ստքը միշտ կտաի մէջ կը քալէ և յուրվակի դեռուտնէ մը չտարբերի. անոր հրեշտակի սիրա, սէր, նուիրում, վարք տալ, բարի ննարք մ'է երևակայութեան, բայց, կը կրկնեմ, իրութիւն չ'ունի:

— Աը սխալիք, ազնիւ երիտասարդ, պատասխան տուաւ անզոյիացին բարակ հեզուութեամբ. ձեր հասակին մէջ այսպիսի դասն խորհուրդներ յուսանատութեան կը տանին և յուսանատութիւնը, կրնաք փորձիս հատալ, բարոյական մաս է: Մէկ բացատրութիւն կը բաւէ այս երևակայական անձերու կատարելութիւնը հաստատելու համար: Թող Հայ զիւցադնուելի մը ըլլայ ձեզի փաստ և միտ զրէք:

Այս ըսաւ անզոյիացին և դմայլուն դէմքով սկսաւ պատմել հետագայ դէպքը:

Արդէն երկու օր կար որ Նրեան քաղաքը հասեր էի և Ջէնիլի գետին բալորախիքը, շուկաները և ուրիշ տեսնելու արժանի տեղերը պտըտելէ հտն կամբ ըրի երթալ տեսնել այն համբաւաւոր բերքը որ իր անունը Բասիլի վիչ զօրավարին տուեր էր: Այս բերքին մէջ շատ հետաքրքրական բաներ կային և պարսիկ տէրութեան հետքը զրեթէ ամէն տեղ կը նշմարուէր: Հետս մեկ ծարգման ունէի երկու սպասաւոր և մէկ սուս պաշտօնատէր որ շատ մեծ հիրասիրութիւն կ'ընէր ինծի: Նրբ բերքին պատուհաններու մէկուն առջև հասայ, ծարգմանս, որ իր նմաններէն վար չ'էր մնար և իր շատախօս լեզուն հազիւ կը բռնէր, կանգ առաւ և սկսաւ պատմել հայ զիւցադնուելի մը քաջութիւնը, բայց այնպէս կէս կտուր և անյար կերպով որ կրնամ ըսել բան մը չհասկցայ: Բնական միտում ունիմ քաջերու վրայ և վարքերնին ինծի համար այնպիսի բարոյական տեսարան մը կ'ընծայէ որ ամէն բան մոռնալ կուտայ և դարմանքով կը պաշարէ միտքս: Աստի այն համառօտ և մտթ տեղեկութիւնով զոն չ'էղայ և փափաքելով աւելի ընդարձակ պատմու-

թիւն մը հաւարել սկսայ հարցումներս բազմապատկել քաղաք իշնելու ժամանակ : Շատ մարդ այս զիւցադնուհիւն սլատմութիւնը հաստատեց սակայն հոս ալ միտքս գոհ չ'եղաւ : Երկուսն մը կերակուրէ ետեւ պառաւ կնկան մը յիշողութեան զիմեցի յուսալով որ դանկիկ կը ճանչնայ կամ գոնէ անոր արիւթեան մանր պարագայները կը յիշէ : Յոյսս սխալալ չ'եղաւ : Կիները տեսակ մը փառք էր սեպեն իրենց սեպին վերաբերեալ արիւթիւնը ճմուռնալ և երբ առիթ մը կը գտնեն զարմանալի կերպով կը պատմեն զան : Աւելորդ է հոս կրկնել թէ սր բան բերկրութիւն զգացի այն երեկոյ այս բարոյական և սիրաբոյր պատմութիւնը լսելով : Գուր և ձեզի նման երիտասարդ սիրտեր որք զեռ նիւթական կեանքի և շահու ստորին խորհուրդներով անզգայ չ'են եղած, առ հասարակ կը դուարթանան և կը բորբոքին վեհ քաջութեան մ'առջև : Հոն է ճշմարիտ մարդութիւն և հոն պատկեր և օրինակ սուրբ կիրքերու որովք բարի սիրտերը կ'ապրին և կ'սփոփուին :

Հայ զիւցադնութիւն՝ որու բուն անունը չ'եմ յիշեր թէ պէտեւ զրած ըլլամ զայն իմ թուղթերու մէջ, Նրասի՝ ԿԱՍՏՆՔԻՆԿԵՏ Նրասի ինչպէս կ'ըսէ լատին հեղինակ մը, զետին եղերքի կողմերը թշուառ զիւղի մը մէջ ծնած է : Դէմքով հրաշալի, վարքով համեստ, սիրտով կարգէ դուրս սէզ և հոգով արի, այս օրիորդը, ինչպէս նաև զրեթէ բոլոր համազգի օրիորդները, իր մանկութեան հասակը անցուցեր էր մայրական ձեռն ներքև և առտնին արհեստները լաւ գիտէր : Գիւղին ամէն երիտասարդները իր վրայ աչք տնկեր էին և ի բոլոր սրտէ կ'աշխատէին այնպիսի քաջութիւնով մը հանդիսանալ որով կարենան փառաւորուիլ և համարձակիլ, օր մը, անոր սէրը գրաւել, վասնզի այս կողմերու համար քաջութիւնը սիրոյ ընտրելին է զեռ՝ և մեր կողմերու պէս սէրը ձեռն չկարկարէր ոսկեկուռ ձեռի մը որ ամենափոքր վտանգի մ'առջև կը զողայ : Հոն ամուսնութիւնն է միութիւն սիրոյ և արիւթեան. հոս հարուստ կապ մ'է որ երկու դատարի, շատ անգամ նաև ապականակիւր սիրտեր իրարու նեւ կը պրկէ և կը տանի... մի հարցմէր սուր : Բարձրագոյն սիրահարներու մէջէն զեղանի օրիորդը ընտրել էր այնպիսի երիտասարդ մը որու քաջութիւնը և անան վարքը Գիւրտերուն սոսկում կուտային և որ իր աշխատասէր բարքով բաւական ոսկի հաւեր էր թէ իր սպազային և թէ իր նիւօրեայ ծնողքնէ բուն վերջին օրերը հանգստութեան մէջ պահելու համար : Արդէն նշանաւոր եղած էր և հարսնիքի երանաւտ օրերը կը մտնենային երբ անակնկալ դէպք մը ամէն յոյս փարատեց : Հոյակապ օրիորդը յանկարծ աներևոյթ եղաւ տունէն և շարածներով մարդ չ'էր գիտեր թէ ինչ ձիւն էկա զխտուն : Այն ժամանակ, ինչպէս յայտնի է, Պարսիկները կը տիրէին Հայաստանի Արարատ նահանգին վրայ և տառապանք չկար որ խնայէին անոր ողորմելի

բնակիչներուն : Երբ կը մտածեմ թէ տաս դար է որ Հայաստան պարսիկ, արապ և ուրիշ խուժով ազգերէ կը նահատակուի, մեծ զարմանքով կը յափշտակուիմ Հայերուն էութեան վրայ : Այն, զարմանալի բան է որ հոյ սերունդը, ամէն տեսակ վիշտեր և հալածանք կրելէ ետեւ անհեռ չ'եղաւ իր աւերակներու մէջ ուրիշ շատ ազգերու պէս . ինչ բարոյական և քրիստոնէի արիւթեան հոգի մը պիտի ունենար անկիւ որ մինչև մեր օրերը մնայ, խլրտի, շարժի և փլատակներու մէջէն կենդանութեան ձայն տայ : Հայերը կը նմանին այն ճամբորդին զոր տեսայ Հնդկաստանի մէջ և որ վայրենիներու ձեռք իյնալէն և կիսամահ վիրաւ որուելէն ետք, օրերով մահու և կեանքի մէջ կ'երեւար, այլ ի վերջէ զարման գտնելով ողջացաւ և սկսաւ ինծի ուղեկից ըլլալ : Այս կ'ըսեմ ոչ զձեզ շողորթուելու համար այլ որովհետեւ քանի մը զաւտուի մէջ տկանատես վիայ եղայ զանազան դէպքերու ուր Արամեան ողին ինձ միշտ կ'երևէր շատ բարոյական առաքինութիւններով զարգարուն և սպառազէն : Բարոյականը, ինչպէս նաև ամէն ընդհանուր տեսիլ որ մարդկային բազմութիւն մը կը կապէ այն բազմութեան անդրդուելի էութիւն մը կուտայ ազգերու մէջ . բաւական է որ ապականութիւնը չիյնայ հոն :

Պարսիկները կ'զգային զայս և իրենց կատաղութիւնը աւաղակի անագորոյն յափշտակութեան կերպերը աւեր էր : Կառավարել չ'էր միտքերնին՝ հասաւ թալլել, աւերել և արին թալլել : Բայց, կրնայ ըսուիլ թերթիլիէնի խօսքը քիչ մը ալայլելով . Արիւն ազգի, սերին ազգի :

Օր մը Նրեանի բերդին իշխանը որ, եթէ լաւ մը կը յիշեմ, Հիւսէյին Պէյ կ'անուանէր՝ իր սպայներով նահանգին մէջ պտըտելու կ'ենէ : Քաղաք, աւան, զիւլ, ամէն տեղ իր բռնասէր ոգին շունչը կ'զգայ և ուրկէ որ անցնի կայծակի հարուած մը կը թողու իր ետևը : Կուգայ, կը հասնի Նրասիին եղերքը, փոքր զիւլ մը կը մտնէ շինականի մը տուն կ'իջնէ և անիրաւ հարկեր կը սահանջէ :

(Վերջը հետևեալ թիւին.)

Համարտու Տըլէդր.